ձգտում երբէք չէ կարող ցանկալի հետևանք ունենալ, եթէ չունենայ տոկուն պաշտպաններ նոյն իսկ հայերի միջից։ Բայց շա՞տ կարող են արդեօք համարել իրանց մէջ տաճկահայերը այդպիսի ազգանուէր հերոսներ։ Հայկական խնդիրը զարթեցուց մինչև այժմ լսել ենք և կարդացել ենք միայն արժանապատիւ Կերսէս պատրիարգի վերա, որ իրաւ մի անբնական քաջագործութիւնով կրում է իր ուսերի վրա իր վեմ պաշտօնի հետ կապված ազգային գործերի բոլոր դժուարութիւնները—լսել ենք նոյնպէս Խրիմեան հայրիկի և Խորէն եպիսկոպոսի գործունէութեան մասին։

Բացի այս երեք ազգանուէր հոգևորականներից դժուար թէ կարողանան ցոյց տալ տաճկահայերը ուրիշներին, որոնց կարողանայինք անուանել ազգային գործի առաջնորդներ։ Մինչև այժմ ոչ մի աշխարհական չէ երևացել քաղաքագիտական ասպարիզում, ոչ մի առենաբան, ոչ մի պուբլիցիստ չէ կարողացել այնպիսի անուն և նշանակութիւն ստանալ, որ եւրոպական մամուլը կարողանար մատանիշ անել նրանց վրա, ինչպէս տաճկահայատակ հայերի ներկայացուցիչների և քաղաքական առաջնորդների վրա։ Տաճկահայատակ բոլոր քրիստոնեայ տարրերը ունեն փոքր ի շատէ յայտնի քաղաքական գործողներ, իսկ հայերը, որ գուցէ նրանցից աւելի լուսաւորված լինեն, ոչ մի խելքը գլխին քաղաքագէտ չեն կարող ցոյց տալ իրանց միջից։ Այդ մեծ պակասութիւնն աւելի մեծ անբաղդութիւն է։ Մի այսպիսի ժամանակ, երբ ամեն մի քայլափոխում անհրաժեշտ է գործ դնել նուրբ քաղաքագիտական տակտ, այդ պակասութիւնը աւելի զգալի է։ Օգտի է մանաւանդ մի ամենակարևոր և ուժեղ միջոցի պակասութիւն, այդ օտար լեզուով հրատարակվող հայկական օրգանն է։ Մեզ՝ ռուսաստանցի հայերիս այնքան հարկաւորութիւն չը կայ պետական լեզուով մի յատուկ օրգան ունենալու, որովհետև մենք չունենք Ռուսաստանում այն առանձին ազգային շահերը և բացի սորանից իշխող ազգի հետ հաւասար վայելում ենք բոլոր իրաւունքները։ Ուրիշ բան է Տաճկաստանում, այնտեղ հայ տարրը ստիպված պէտք է լինի զանազան միջոցներ գործ դնելու ամեն մի իրաւունք ձեռք բերելու։ Հայկական օրգանը այդ միջոցներից ամենագլխաւորը կարող է լինել։ Թող մտածեն այդ կարևոր հարցի վրա մեր տաճկահայատակ ազգակիցները։ Կ. Պոլսում մի ֆրանսերէն օրաթերթ կամ շաբաթաթերթ հիմնելը մեծ դժուարութիւններ չէ կարող պատճառել։ Ձենք կարծում, որ չը գտնվեն այնպիսի լուսաւորված և փոքր ինչ քաղաքագիտական հմտութիւն ունեցող անձինք, որոնք կարողանային վարել այդ թերթը, ծառայացնելով նրան յատկապէս հայկական շահերին։ Այդպիսով միջոց կը տրուէր եւրոպական մամուլին աւելի մոտ ծանօթանալու տաճկահայատակ հայերի պահանջների և շահերի հետ։

Ա. Դաղեանց

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒՈՑ

—

12 տարվի

Նաթի առնտուրը որ մինչև այժմ Բագուի հարստութեան գլխաւոր աղբիւրն է եղել, այժմ գնաբարեալ տաքնապի մէջ է գտնվում և այդ անա երկու տարուց աւել է։ Այս երկու տարվայ ընթացքում հանքատէրերը և գործարանատէրերը մեծ վնաս կրեցին չը նայելով այն հանգամանքի վրա, որ բնութիւնը առատօրէն դուրս է հոսում նաթը, որի համար հանքատէրերը տեղ անգամ չեն գտնում պահելու և չատերը նորից ստիպված են հոսանքի առաջն առնելու համար կապել իրանց նաթախողովների բերանը։ Հաւատացնում են թէ և թէ մեծ պահանջ լինի, հանքատէրերը կարող են օրական կէս միլիոնի չափ սև նաթ բաց թողնել իրանց հանքերից։ բայց տարաբաղդաբար օրական պահանջը հազիւ թէ մի հարիւր հազարի է հասնում և սորա պատճառն այն է, որ գործարաններից չատերը դադարեցրել են իրանց գործունէութիւնը։ Բայց այստ ամենայնիւ Ռուսաստան գնացած ֆոստոդէնի քանակութիւնը համեմատաբար տարից տարի աւելանում է, ինչպէս 1878 թ.-ին ուղարկված էր 6,000,000 պուդ, իսկ անցեալ 1879 թ.-ին համարեա թէ մոտ 7,000,000 պ., իսկ այս տարի եթէ ոչ աւել, գոնէ պակաս էլ չի գնայ։ Սորա պատճառն այն է, որ ազատ կապիտալ ունեցող գործարանատէրերը ուշադրութիւն չը դարձնելով կրեդիտի վրա, տարից տարի իրանց գործունէութեան շրջանը ընդարձակում են, մինչև մանր և կապիտալ չունեցող գործարանատէրերի թիւը օրից օր պակասում է և գուցէ մի ժամանակ ազա բոլորովին կուլ գնան։ Մեծ գործարանատէրերի վնասը այնքան չէ ինչքան փոքրերինը, որովհետև առաջինների գործունէութեան շրջանը ինչքան լայնանում է, նոյնչափ նոքա կարողանում են ֆոստոդէնը էժան պատրաստել քան թէ փոքրերը։ Մեծ գործարանատէրերից չատերը ունեն սեփական նաթային հանքեր, իսկ չունեցողներն էլ մեծ քանակութեամբ սև նաթը համեմատաբար էժան են առնում քան թէ քիչ առնողները։ Բացի այդ՝ առաջիններից չատերը ունեն նաթային հանքերից մինչև գործարանները սեպհական նաթախողովներ (нефтепроводъ) որի միջոցով նոքա թէ-թէ ծախսով հասցնում են իրանց նաթը, մինչդեռ այդպիսի նաթախողովներ չունեցողները միայն բերելու համար ծախսում են 3 կամ չորս կ. ամեն մի պուդի համար։ Վերջապէս մեծ գործարանատէրը ունի սեպհական նաւեր, որոնցով իր ժամանակին առանց ուրիշի դիմելու հասցնում է

բարոյական տանջանքը, թէ որ ատելման ձանձրացել էր կեանքից և ցանկանում էր հանգստութիւն գտնել գերեզմանի մռայլութեան մէջ։

Այդ միջոցին զարթեց տատիկին։

—Ձեր հիւանդը անհանգիստ է երեսում, ասաց նա,—չէիք ցանկանայ մի բան։

—Ոչինչ պէտք չէ, նա ջերմի մէջ է, կարիկ է չուռով կանգնի....

Քրդուհին մատեցաւ հիւանդին, և ուշադրութեամբ նայելով նրա վրա, հարցրուց.

—Ես ճանաչում եմ այդ մարդուն. դա Թամաս էֆէնդին չէ։

—Նա ինքն է։

—Խեղճ, քանի որ առաջ տեսայ բորիկ, գլուխը բաց և պատառոտած շորերով թափառում էր մեր կողմերում. կրբ մարդիկ մոտենում էին, ձչում էր, ազազակներ էր բարձրացնում ու փախչում։ Ասում էին, ցնորված է։

Վարդանը նոր մտաբերեց, որ էֆէնդուն հանդիպեց նոյն գրութեան մէջ, որպէս նկարագրում էր նրան քարը կինը։ Դա մէջ երևում էին ցնորվածի բոլոր նշանները, դեռ այն ժամանակ, քանի որ նա իրան դեռ ցած չէր գլորել ժայռի բարձրութիւնից։ Բայց ինչու խելագարվեցաւ նա. միթէ էֆէնդու նման մի փղացած բնաւորութեան մէջ կարող էր քարոյական տանջանքը այն ատելման հարուած պատճառել։

—Պատմում էին, թէ էֆէնդին սիրելիս է եղել մի աղջկայ, և ալաչկերացոց զազիականութեան ժամանակ կորել է աղջիկը, ասում էին, որ անայայտ մարդիկ գողացել են աղջկան։

—Ինչ մարդիկ... ինչ աղջիկ... գոչեց Վարդանը խռովել ձայնով և նրա դէմքը ընդունեց զարհուրելի արտայայտութիւն։

—Չեմ իմանում, այդպէս էին ասում։

Վարդանի հարցը աւելորդ էր. նա առաջ եկաւ ակամայ հետաքրքրութիւնից, որ պատահում է յուսահատ մարդերի հետ։ Վարդանը գիտէր, թէ ով էր էֆէնդու ցնորքի առարկան, այժմ նրան կորցրել էր... այժմ նրան գողացել էին...—դրանով ոչնչանում էին Վարդանի մնացած յոյսի նշոյլները, թանկագին նրա հանգած սրտի մէջ տխուր յիշողութիւնների արված մոխիրը մնաց։

Դիշերը աննկատելի կերպով անցել էր. տաքուտեան լոյսը սկսել էր բացվել. դրսից լսելի էր լինում թռչունների ուրախ երգը. փոքրագլուխ և անձրևային գիշերին յաջորդել էր ամառնային վարդակարմիր առաւօտը։

Ցանկալի խրթին գաղից ուրախութեամբ ներս վազեց մի աղջիկ. երևում էր, որ նա հեռու տեղից էր գալիս, որովհետև ոտքից ցցուած թրջված էր և երկայն հագուստի ստորին մասերը թաթախված էին ցեխի մէջ։

—Ջաւօ... կոչեց տատիկիկը և գրկեց նրան։

—Բոյրս... կոչեց աղջիկը և իր կարմրած թէրը մատեցրուց նրա չրթունքին։

Վարդանը, կարծես, առժամանակ մոռացաւ իր ցաւը և սկսեց նայել երկու քոյրերի ջերմ գրկախառնութեան վրա։ Կնոջորը մի բարձրահասակ աղջիկ էր, ցամաք կազմուածքով և բաւական գեղեցիկ դէմքով։ Նա կրում էր իր քրոջ սև, վառվռուն աչքերը, որոնք ուրախութիւնից աւելի անհանգիստ և աւելի շարժուն էին այժմ. նրա թէ դէմքը և թէ անունը ծանօթ էին երևում Վարդանին, բայց թէ որտեղ և երբ էր տեսել նրան,—դժուարանում էր յիշել։

—Գիտես ինչ կայ, խօսեց գեղեցիկ աղջիկը,—Ջաւօն դրանից յետոյ քեզ մոտ կը մնայ, չատ ժամանակ քեզ մոտ կը մնայ. տիկինը արձակեց Ջաւօին։

Որքան ուրախալի լինէին այդ խօսքերը, որքան քաղցր լինէր երեց քրոջը Ջաւօին երկար ժամանակ իր մոտ տեսնելը, այստեղ մենակներս, նա բոլորովին չի թաթվեցաւ, երբ լսեց, թէ տիկինը արձակել է նրան։ Ինչ պատճառով պէտք է արձակված լինէր, քանի որ առաջ խիստ դժուարութեամբ էր հեռանում Ջաւօին, երբ նա ցանկանում էր երթալ իր քրոջը տեսութեան գալու։

—Ինչ է պատահել։

—Մի վախիր, չար ոչինչ չէ պատահեր։

Եւ Ջաւօն սկսեց պատմել, թէ տիկինը առժամանակ միայն արձակեց, որ բնակվի իր քրոջ մոտ, մինչև կրկին կանչել կը տայ։ Տիկինը Ջաւօին փողոտեց, հագուստներ բաշխեց, չատ-չատ լաւ բաներ ընծայեց, և բոլորը Ջաւօն բերեց իր հետ։

—Տես, բոլորը ցոյց կը տամ քեզ։

Նա սկսեց բաց անել իր հետ բերած կապոցը, որ ցոյց տայ իր ստացած ընծաները։ Բայց երեց քոյրը չը բաւականանալով Ջաւօի տուած բացատրութիւններից, կրկին հարցրուց.

—Ինչ է պատահել, ինչու արձակեց քեզ։

—Ջաւօն յետոյ կը պատմէ, դա չատ երկար է, այնքան երկար, որքան Լէյլիի և Մաջնունի հէքեաթը։

Յետոյ նա յայտնեց, թէ ինքը խիստ յոգնած է, ամբողջ գիշերը ճանապարհ է եղել, անիծված անձրևը չատ տանջեց նրան, և այժմ սաստիկ քաղց է զգում. խնդրեց քրոջը որ իրան քիչ կաթ տայ խմելու։ Քոյրը չասպով առեց կովիկը, վազեց փարախը, որ փողը կթէ և քրոջ համար թարմ կաթ բերէ։

Ջաւօն այժմ միայն նկատեց, որ տանը հիր կայ և նրա կրակոտ աչքերը հանդիպեցան Վարդանի հետաքրքրութիւնով լցված աչքերին։

—Նայելի՞ Ջաւօ, դու խուրդրի աղախինն ես,—այսպէս չէ։

—Ուղիղ այդպէս է։

—Ֆաթմա-բէկի տիկնոջը։

—Հէնց նրա։

Վարդանը այժմ գտաւ խանձարիթի թելի ծայրը և դիտմամբ հարցրեց։

—Բէկը մի երկրորդ կին էլ ունէ,—այն հայ աղջկան։

—Կունենար, եթէ Ջաւօն սատանայի նման չը գողանար նրան։

—Հայ աղջկան։

—Հայ աղջկան։—Լալային, Սանփանիին—նա երկու անուն ունի։

Վարդանի սիրտը սկսեց ուրախութիւնից դարբանել։

—Ջաւօն ուր տարաւ գողացած աղջկան։

—Ջաւօն տարաւ իր տիկնոջ մոտ և տիկինը ծածուկ ուղարկեց նրան ռուսաց երկիրը։

Վարդանի դէմքը պայծառացաւ մի անենկարագրելի բերկրութեամբ, և մոռանալով իրան, գրկեց Ջաւօին և չը գիտէր ինչ կերպով յայտնել իր անհուն շնորհակալութիւնը։

—Համբուրիր Ջաւօին,—Ջաւօն ազատեց նրան։

—Ջաւօն իմ քոյրս է, ասաց Վարդանը և եղբայրաբար համբուրեց նրան։

Դեռ մոտ երեց քոյրը, բերելով փրփրագէզ կաթի ամանը։ Ջաւօն առեց նրա ձեռքից և մանգամով մինչև կէսը խմեց։ Ցաք կաթը կաղդուրեց նրա յոգնութիւնը և քաղցը։

—Լիմպ պատմիր, ասաց նրան երեց քոյրը։

Ջաւօն իր յատուկ ձևով սկսեց պատմել, թէ իր տիկնոջ ամուսինը՝ Ֆաթմա-բէկը վազուց սիրում էր մի հայ աղջկայ, որը Ս... գիւղի տանուտեր խաչօի աղջիկն էր։ (Ցանուտերը ծանօթ էր բոլոր հարևան քրդերին)։ Տիկինը չէր ցանկանում որ հայ աղջիկը բէկի կինը լինի, որովհետև նա գեղեցիկ էր և կարող էր մենգամայն գրաւել բէկի սիրտը։ Նախանձից և խանդոտութիւնից դրդված, տիկինը ամեն կերպով աշխատում էր, որ արգելէ այդ ամուսնութիւնը։ Բայց բէկը սաստիկ ընդդիմանում էր նրան։ Եւ երբ բէկը գաղաձ բայազետի կուսիից, պատրաստվում էր գնալ բերել հայ աղջկան, այն ժամանակ տիկինը Ջաւօին իր հաւատարիմ սպասաւորներից երկուսի հետ առաջուց ուղարկեց Ս... գիւղը, որ գնան, և դեռ բէկը այնտեղ չը հասած, գողանան և մի ուրիշ երկիր տանեն Լալային (պսպէս էր նրա անունը)։ Ջաւօն գտաւ Լալային նոյն գիւղի քահանայի տան մէջ, իր եղբօր կնոջ Սաւայի հետ թաքնված։ Սաւան վաղուց գիտէր բէկի նպատակը, և երբ Ջաւօն պատմեց նրան նոյնի գիտաւորութիւնը, նա ուրախութեամբ ընդունեց Լալային վեր առնել և գիշերով մեր սպասաւորների հետ փախչել Ս... գիւղից։ Նրանք տարան Լալային ռուսաց երկիրը, և բէկը մնաց ափսոս կարդալով և փր գլխին տալով։ Տիկինը սկսեց ծածուկ ծիծաղել և ուրախանալ, որ խլեց նրանից գեղեցիկ Լալային։ Մեր սպասաւորները մի քանի օրից տեղ յանգրաֆան լուր բերեցին, թէ անվտանգ տեղ հասցրին աղջիկն։ Իսկ Ջաւօին տիկինը ասաց, որ գնայ ատ ժամանակ իր քրոջ մոտ մնայ, մինչև բէկի բարկութիւնը անցնի։

Ջաւօի պատմութիւնը այն ատելման գրաւել էր իր քրոջը և մանաւանդ Վարդանին, որ նրանցից ոչ ոք չը նկատեց, որ հիւանդը նոյնպէս ուշադրութեամբ լսում էր։ Երբ Ջաւօն վերջացրեց լսելի եղաւ նրա ձայնը.

—Լիմա կարող եմ հանգիստ մեռնել։ Լալան ազատված է...

Վարդանը մոտեցաւ և բռնեց նրա փաստանիվ գլուխը, որ զոդզոդից և ընկաւ բարձի վրա։

—Վոված էլը գարուս հոտն առաւ, մինչև գորին թերեր, հոգին տուաւ...

Այդ եղաւ էֆէնդու վերջին խօսքը։ Քրդուհին և իր քոյրը նոյնպէս մոտեցան հիւանդին։

—Նա մեռաւ, ասաց Վարդանը։

—Խեղճ, կրկնեցին երկու քոյրերը։

(Կը շարունակվի)

չատ էժան գնով Ռուսաստան։ Այլի առաջ ունենալով այդ հանգամանքները, չատ հեշտութեամբ կարելի է գուշակել մանր գործարանատէրերի աւարգան, մանաւանդ տեղացիների, որոնց սպասում է նաւթալայ մասնակցութիւն։ Տեղացիներից նոյնիսկ մեծ գործարանատէրերի ապագան կա անհայտանալի կը լինի, եթէ նոքա իրանց գործերը չարունակեն այնպիսի անենամատնութեամբ, ինչպէս մինչև օրս։ Այս փաստը հաստատելու համար բաւական է մի օրինակ բերել այստեղ։ Մի չնչագոյն կապիտալիստ Նոբել անունով, որ չատ ժամանակ չէ սկսել Բաքուում պարապել նաւթային առեւտրով, 1878 թ-ին հանքերից մինչև գործարանները նաւթ կրող սայլակների հարստահարութեան առաջն առնելու համար, նա ամենապատուական նաւթախողովակ չինողներից և երկար ժամանակ նա մեծ օգուտներ քաղեց այդ բանից, ինչպէս 1878 թ-ին օրական միմիայն նաւթ կրելու համար բացի իրան գործարանի համար, ուրիշներից ևս ստանում էր մօտ 600 ր. մինչև տեղացիներին, ինչպէս իրանք ասում են, արարանչները քանդում էին։ Քան տարվայ ընթացքում տեղացիներից մէկը չը գանվեցաւ, որ այդ բանը մտածէր և այդ չատ հասկանալի է, որովհետև նոքա առեւտրի մէջ ամենավախկոտներն են, որոնք ոչ մի բանում չեն կարողանում ինքնուրոյն գործել։ Սորանց համար եկած պիտի լինի, որ ուտեն, որովհետև իրանք եկելու իսկի չուներ։ Աչխարհի միւս կողմից գալիս է մի որ և իցէ Նոբել կամ ուրիշ և օրինակ գտնում տեղացիների համար։ Բայց այդ բաւական չէ. լինում Նոբելը այժմ ունի այնպիսի նաւեր (наливныя суда), որոնցով ֆոտոգէնը ուղարկում է Ռուսաստան առանց տակառների, իսկ տակառները լինել է տալիս Ռուսաստանում, ոչտեղ հասնմատարար նորան չատ լէժան են նստում և բացի այդ տակառներում տանելը մեծ վնաս է մանաւանդ ամառ ժամանակ, երբ արեկագի տաքութիւնից ֆոտոգէնը տակառներից Ռուսաստան տանելու ժամանակ գուրս է հոսում։

Բայց գտանէք գարեալ մանր գործարանատէրերին, որոնց գրութիւնը ուշադրութեան արժանի է, մանաւանդ հայերինը։ 1876—77 թ-երին, երբ ֆոտոգէնի, այսպէս ասած, ոսկի ժամանակն էր, ամէնքը սկսեցին մի կերով ձեռք բերել մի գործարան կամ մի հանք, մի խոշորով ամէնքը սկսան վազ տալ նաւթի ետեից։ Դերձակը կամ կօշկակարը, որ իր արհեստով չատ գոհացաւոր էր ապրում, չը բաւականանալով իր վիճակով, կամ լաւն ասած, նախանձելով հանքատէրերի և գործարանատէրերի ժամանակաւոր բախտին, թողնում էր իր ոսկի արհեստը և ընկնում նաւթի ետեից։ Նա իր գառն քրտինքով աչխատած կապիտները վատնում էր մի գործարան կամ մի հանք ձեռք բերելու համար, ձգտելով դէպի յանկարծակի հարստութիւն։ «Բա, ինչու կրամպէ՛ի՛կովը, Բաղիրովը կպտակա՞ա, գրօչկա ունենա՞ն, ես չունենա՞մ, ես էլ բաղդս կը փորձեմ», այսպէս ասում էր գերձակը, ասերը չը պրատեմ, երեսախլելով իր ապագան փատատոր պրպտաներում։ Մի խոշորով այս ժամանակվից Ֆեն-Ֆրչանները ժողովվելով 7 կամ 8 հոգի մասին, կազմում էին ընկերութիւններ։ (Այդ ընկերութեանց մէկի անունը այստեղ ծաղրելով «Զամբարաքանդ» են դրել)։ և սկսում էին գործել։ Մինն, վայ այն գործելուն, որ նորանք էին գործում. ինչ տեսակ խարերայութիւն ասես, գործ էին դնում իրանց միամիտ մուշտարիներ ստանալու համար, մանաւանդ բոլորովին իրանց խեղճը ու խղճմտանքը։ Երբ ֆոտոգէնը լաւ գնում էր, սորանք ոգևորվելով հանքամանքից, Ռուսաստանից եկող ուսանողներին և հրաձերին ծախում էին ապաչին տեսակի տեղ, երկրորդ տեսակը կամ անիս տակը (не очищенный) ֆոտոգէն և այդպիսով խաչառակում էին խեղճ մեծ գործարանատէրերի անունն էլ։ Ահա ինչ տեսակ էին կործ գնում այդ հերոսները։ Իրանց խաբեբայութիւնը, տակառի տակից լցնելով էին անիստակը, իսկ երեսից լաւ տեսակը և լաւի տեղ ծախում. առողը ի հարկէ չը գիտէր թէ տակառի ներքնում ինչ կայ։ Բայց երկար չը մնացաց սորանց բաղդը, հասաւ 1878—79 թ. և առեղները սկսեցին լաւ ուշադրութիւն դարձնել ֆոտոգէնի յատկութեան վրա և նոքա պիտի ուզղակի դիմում են մեծ գործարանատէրերին։

Ահա այդպիսիներից է կազմված փոքր գործարանատէրերի մեծամասնութիւնը։ Այժմ տեսնելով այդ պարհները, որ էլ իրանց բաւարէլէ, սկսում են փոքր առ փոքր թողնել և գառնալ իրանց արհեստին, բոլորովին մոռանալով հարուստների զը-ը-ը-